

կանոնաւորաբար շարուած գերեզմանաքարերու երկու խումբեր էին՝ անհատնում, անհաշիւ գերեզմանաքարեր... որոնցմէ ոմանք Յարական «բարեխնամ» կառավարութիւնը երկաթուղիին ճամբան հաւասարեցնելու համար կամուրջներ շինելու տեղ առատօրէն գործածած էր ձորակներ լեցնելու համար: Այն ատեն այնքան մօտ էի եւ սակայն այնքան հեռու իմ «դրախտէս»... նոյնիսկ զիս տանող կառաւարքը կը թաւալէր այդ մեծարժէք Ջուղայական հայ հնութեանց բեկորներուն վրայէն:

Թէ այդ եւ թէ ուրիշ առթիւ ի զուր եղան իմ զիմումներս գոնէ օր մը զիս զինուորի մը հակողութեամբ Խորհրդային ներկայ ողորմելի Ջուղայ կայարանէն հին Ջուղայ երթալ թոյլ տալու համար: Արաքսի վրայ այդ սահմանապահ անցքին Խորհրդային զինուորական իշխանութիւնները քաղաքավար այլ կարուկ «ոչ» ըսին միայն՝ ինծի այն տպաւորութիւնը տալով, որ զինուորական-սահմանային դիրքին զաղտնի հանգամանքով հին Ջուղան ինծի նրման օտարականներուն համար անմատչելի էր:

Ի զուր եղան նաեւ ճիւղերս Միացեալ Նահանգներու մէջ Հարվըրտի նման համալսարանի մը որոշ ճիւղերը հետաքրքրել հին Ջուղա կատարուելիք գիտական-հետախուզական արշաւանքի մը համար: Ատոր ալ անյաջողութիւնը զիս յուսախար չէ ըրած, քանի որ այսօր ամէն ատենէ աւելի կ'ակնկալեմ այս պատերազմէն վերջ, երբ այլեւս պայմանները փոխուած կ'ըլլան մասամբ, առիթ մը կ'ունենամ հին Ջուղայի լերի եւ արեւակէզ ըլլակներուն, աւերակներուն եւ տապանաքարերուն մէջ որոնել, պրպտել եւ լուսարանութիւն դառնել շատ մը հայ մշակութային, պատմական եւ այլ խրթին հարցերու:

John-Thomas Minadoi Վենետիկցի մեծանուն պատմագիրը ԺՁ. դարուն մեզի թողուցած իր մանրապատում «Պարսից եւ Թրքաց պատերազմներուն պատմութիւնը» զանոնք մինչեւ 1587 հասցնելով, Ջուղայի մասին ալ կը վկայէ: Այդ Ջուղան մօտաւորապէս 10,000 հօգի բնակչութեամբ տեղ մըն է՝ զետեղուած Ատրպատականի եւ Հայաստանի սահմաններուն վրայ եւ սակայն Հայաստանի մէջ, Թաւ-

րիզէն երեք օրուան ճանապարհով հեռու, բրնակուած Քրիստոնեաներէ մասամբ հայ եւ մասամբ Վրացի, Ժողովուրդ մը որ աւելի նըւիրուած է մետաքսի, ինչպէս նաեւ ուրիշ տեսակ ապրանքներու առեւտուրին, որով անոնք հարստացան եւ առատ դրամի տիրացան, փոխանակ դէնքերու եւ պատերազմի մասին ծանօթութիւն ունենալու»: (1)

Վենետիկցի Մինատօի վկայութենէն դրեթէ բառացի օգտուած է Անգլիացի John Cartwright ուղեգիրը, որ 1603-ին կը վկայէ անցած ըլլալ հին Ջուղայէն: (2) Ան կ'աւելցնէ որ Շամախի, Կուր եւ Արաքս դետերուն միջեւ տարածուող հողամասը «անցեալ ժամանակներուն տուած է մեծ քանակութեամբ այն նուրբ, ճերմակ մետաքսէն, որ վաճառականներէն ընդհանրապէս Մամօտաէն (Mamodaeen) մետաքս կոչուած է, որմէ այսօր չէ կարելի դըտնել նոյնիսկ փոքր քանակութեամբ, հակայական աւերման պատճառաւ որ տեղի ունեցած է այս երկիրներուն մէջ, մասամբ մեծ թուրքին բանակներուն եւ մասամբ ալ Պարսից բանակներուն միջոցաւ: (3)

(1) The Warres Between the Turks and the Persians.—Trans. Abraham Hartwell, London, 1595, p. 368:

(2) A Collection of Voyages... Thos. Osborne, London. 1745, Vol. I, p. 724: Անկէ առաջ Purchas His Pilgrimes, Vol. VIII, p. 496:

(3) Անդ էջ 500-501: Ան կ'աւելցնէ սա հետաքրքրական տեղեկութիւնը՝ մեծապէս շահեկան Հայ հաղորդակցութեան պատմութեան համար: Թավրիզէն Գաղվին ճամբուն վրայ «հանդիպեցանք», կ'ըսէ ան, «վայելուչ խումբի մը Պարսիկ ճիւղորներու, որոնք թաղաւորին իշխանութեան սահմաններուն մէջ կը մնան. ատոր երկայնքին երթեւեկելով, սպաննելու համար Թուրք վաճառականներ, որոնք պատահի որ այդ ճամբէն անցնին, ասիկա իբր վրէժ Պարսիկ վաճառականի մը, որ (մեր գալէն քիչ առաջ) ճոխութեամբ Վան կը հասնի ուր անարգանքով իր ապրանքներէն եւ կեանքէն կը զրկուի: Այս պատճառաւ սոյն զօրախումբին